Նոտարական ակտի կոդ: 510-20220729-73-6127061
Նոտարական ակտի գաղտնագիր: 6OWD1L

ԴՐԱՄԱԿԱՆ ԳՈՒՄԱՐԸ ԴԵՊՈԶԻՏ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ
Վ Կ Ա Յ Ա Գ Ի Ր

Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան
Երկու հազար քսաներկու թվականի հուլիսի քսանիններին

Ես՝ՀՀ «Երևան» նոտարական տարածքի նոտար Վանինե Ժորայի Հովսեփյանս, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 366-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետի, «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 73-րդ հոդվածի, պահանջներով,

ԴԵՊՈԶԻՏ ԸՆԴՈՒՆԵՑԻ **«ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» Բաց բաժնետիրական ընկերության**, հասցե՝ ԵՐԵՎԱՆՅԱՆ / 2 (ԵՐԿՈՒ) ՉԱՐԵՆՑԱՎԱՆ 2501 ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ԿՈՏԱՅՔ ՀԱՅԱՍՏԱՆ, գրանցման համար՝ 39.120.00360, ՀՎՀՀ՝ 02800538, ի դեմս տնօրեն՝ **ԽԱՉԱՏՈՒՐ ԱՐՇԱԿԻ ԱՆՏՈՆՅԱՆԻ**, ծնված՝ 17/01/1961թ-ին, ՀԾՀ՝ 2701610176, նույնականացման քարտ՝ 006930978, տրված՝ 003-ի կողմից, 15/10/2015թ-ին, հաշվառված՝ ՔԱՂԱՔ ԵՐԵՎԱՆ, ՇԵՆԳԱՎԻԹ, Գ. ՆԺԴԵՀԻ ՓՈՂՈՑ, 12 (ՏԱՍՆԵՐԿՈՒ) ՇԵՆՔ, 6 (ՎԵՑ) ԲՆԱԿԱՐԱՆ, կողմից հատկացված՝ 69 840 620 (վաթսունինը միլիոն ութ հարյուր քառասուն հազար վեց հարյուր քսան) ՀՀ դրամ գումարը, որը 27/07/2022 թվականին փոխանցվել է իմ՝ նոտար Վանինե Ժորայի Հովսեփյանիս, ՀՀ Կենտրոնական գանձապետարանում բացված թիվ 900018000092 դեպոզիտ հաշվին՝ 08/06/2021 թվականին ՀՀ Չարենցավան քաղաքում կազմված «ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» ԲԲԸ-ի բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի թիվ 1 արձանագրության, 13/05/2022 թվականին ՀՀ Չարենցավան քաղաքում կազմված «ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» ԲԲԸ-ի խորհրդի թիվ 7 և 26/07/2022 թվականին ՀՀ Չարենցավան քաղաքում կազմված «ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» ԲԲԸ-ի խորհրդի թիվ 9 որոշումների հիման վրա թիվ 9 որոշմանը կից հավելվածում նշված ցուցակի 6-11 և 13-210 կետերում նշված անձանց կամ նրանց օրենքով սահմանված իրավահաջորդներին կամ բաժնետոմսերը օրենքով սահմանված կարգով ձեռք բերած անձանց հանձնելու նպատակով:

Դեպոզիտ հանձնող անձի ինքնությունը, գործունակությունը, իրավաբանական անձի իրավունակությունը, նրա ներկայացուցչի լիազորությունները՝ ստուգված են:

Գրանցված է գրանցամատյանում թիվ 5802-ով:

Գանձված է պետական տուրք երկու հազար ՀՀ դրամ և ծառայության վճար վեց հարյուր իննսունութ հազար չորս հարյուր վեց ՀՀ դրամ ՝ համաձայն «Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների:

Նոտար Վանինե Ժորայի Հովսեփյան